08.11.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
նոյեմբերի 6-ի N 1786 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ, ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննչական մարմնում (այսուհետ՝ Քննչական մարմին) ինքնավար պաշտոնների դասակարգման, դասային աստիճանների տրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են ինքնավար պաշտոններին ներկայացվող չափանիշները:

2. ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

2. Քննչական մարմնում ինքնավար պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) Քննչական մարմնի բարձրագույն խմբի պաշտոն՝

ա. վարչության պետ.

2) Քննչական մարմնի գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. վարչության պետի տեղակալ,

բ. բաժնի պետ,

գ. հատկապես կարևոր գործերով քննիչ-բաժնի պետի տեղակալ,

դ. հատկապես կարևոր գործերով քննիչ.

3) Քննչական մարմնի առաջատար խմբի պաշտոններ՝

ա. ավագ քննիչ.

բ. քննիչ:

3. Սույն հավելվածի 2-րդ կետով սահմանվող պաշտոններում կարող են նշանակվել բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն

իրավաբանական կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, պարտադիր զինվորական ծառայություն անցած կամ «Զինապարտության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և (կամ) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 22-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր զիվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված (բացառությամբ իգական սեռի անձանց) Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր չունեն Քննչական մարմնի ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն (որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը), ինչպես նաև բավարարում են աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշներին.

1) Քննչական մարմնում վարչության պետի պաշտոնի համար՝ մինչև նշանակումը Քննչական մարմնի գլխավոր խմբի պաշտոնի 4 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ դատախազության կամ այլ քննչական մարմնում ինքնավար պաշտոնի, դատավորի, հետաքննության մարմնի հետաքննչական ստորաբաժանման աշխատակցի, փաստաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

2) Քննչական մարմնում վարչության պետի տեղակալի պաշտոնի համար՝ մինչև նշանակումը Քննչական մարմնի գլխավոր խմբի պաշտոնի 3 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ Քննչական մարմնի առաջատար խմբի պաշտոնի 4 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ դատախազության կամ այլ քննչական մարմնի ինքնավար պաշտոնի, դատավորի, հետաքննության մարմնի հետաքննչական ստորաբաժանման աշխատակցի, փաստաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

3) Քննչական մարմնում բաժնի պետի պաշտոնի համար՝ մինչև նշանակումը Քննչական մարմնի գլխավոր խմբի պաշտոնի 2 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ Քննչական մարմնի առաջատար խմբի պաշտոնի 3 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ դատախազության կամ այլ քննչական մարմնի ինքնավար պաշտոնի, դատավորի, հետաքննության մարմնի հետաքննչական ստորաբաժանման աշխատակցի փաստաբանի առնվազն 4 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

4) Քննչական մարմնում հատկապես կարևոր գործերով քննիչի-բաժնի պետի տեղակալի և հատկապես կարևոր գործերով քննիչի պաշտոնների համար՝ մինչև նշանակումը Քննչական մարմնի առաջատար խմբի պաշտոնի 2 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ դատախազության կամ այլ քննչական մարմնի ինքնավար պաշտոնի, դատավորի, հետաքննության մարմնի հետաքննչական ստորաբաժանման աշխատակցի, փաստաբանի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

5) Քննչական մարմնում ավագ քննիչի պաշտոնի համար՝ մինչև նշանակումը Քննչական մարմնի առաջատար խմբի պաշտոնի 1 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ դատախազության կամ այլ քննչական մարմնի ինքնավար պաշտոնի, դատավորի, հետաքննության մարմնի հետաքննչական ստորաբաժանման աշխատակցի, փաստաբանի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

6) Քննչական մարմնում քննիչի պաշտոնի համար՝ մինչև նշանակումն ունի քննչական մարմնի ինքնավար պաշտոնի, դատավորի, հետաքննության մարմնի հետաքննչական ստորաբաժանման աշխատակցի, փաստաբանի առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

4. Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վրա տարածվում է «Հանրային ծառայության մասին» օրենքով հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվող անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները և շահերի բախումը:

3. ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Քննչական մարմնում ինքնավար պաշտոնների համար սահմանվում են հետևյալ դասային աստիճանները.

1) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդական.

2) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական.

3) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդական.

4) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական.

5) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդական.

6) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդական.

7) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդական:

6. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճանը շնորհում է Հանրապետության նախագահը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց այլ դասային աստիճանները շնորհում է Կոմիտեի նախագահը՝ Քննչական մարմնի ղեկավարի ներկայացմամբ:

7. Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց դասային աստիճանները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:

8. Դասային աստիճանների ներկայացնելիս նշվում են ծառայողի կենսագրական տվյալները, աշխատանքի գնահատականը, նրա գործնական և անձնական հատկանիշների բնութագիրը:

9. Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը, որն ունի գրավոր կարգապահական տույժ, կամ որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում կամ անցկացվում է ծառայողական քննություն ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վարքագծի կանոնները խախտելու փաստի առթիվ, դասային աստիճանների ներկայացնելը հետաձգվում է համապատասխանաբար մինչև կարգապահական տույժի կրման ժամկետի ավարտը կամ հարուցված քրեական հետապնդման դադարեցումը կամ ծառայողական քննության ավարտը՝ արդարացման հիմքերով: Հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգելու խոչընդոտների վերացումից հետո հերթական դասային աստիճանը շնորհվում է մեկամսյա ժամկետում:

10. Քննչական մարմնում վարչության պետի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդականի աստիճանն է, իսկ ստորին

սահմանը՝ Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդականի աստիճանը:

11. Քննչական մարմնում վարչության պետի տեղակալի կամ բաժնի պետի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդականի աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդականի աստիճանը:

12. Քննչական մարմնում հատկապես կարևոր գործերով քննիչ-բաժնի պետի տեղակալի կամ հատկապես կարևոր գործերով քննիչի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդականի աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդականի աստիճանը:

13. Քննչական մարմնում ավագ քննիչի կամ քննիչի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդականի աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդականի աստիճանը:

14. Այլ մարմիններում հանրային ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող Քննչական մարմնում ինքնավար պաշտոնի նշանակելիս նրանց զինվորական կամ հատուկ կոչումը (դասային աստիճանը, որակավորման դասը) համապատասխանեցվում է Քննչական մարմնում ինքնավար պաշտոնների դասային աստիճաններին, ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի:

15. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանը Քննչական մարմնում սկզբնական աստիճան է: Այն շնորհվում է առաջին անգամ Քննչական մարմնում ինքնավար պաշտոնում նշանակված բարձրագույն կրթություն ունեցող, այլ մարմիններում հանրային ծառայություն չանցած անձին՝ Կոմիտեի նախագահի հրամանով:

16. Եթե սույն կարգի 10-13-րդ կետերով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում այն ավելի բարձր է Քննչական մարմնում ինքնավար տվյալ պաշտոնին նշանակվելու սահմանված առավելագույն դասային

աստիճանից, ապա պահպանվում է նրանց զինվորական կամ հատուկ կոչումը (դասային աստիճանը, որակավորման դասը) համապատասխանեցվելով Քննչական մարմնում ինքնավար պաշտոնների դասային աստիճաններին:

17. Քննչական մարմնում ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց դասային աստիճանները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանի սահմաններում, նախորդ դասային աստիճանում ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո, հաջորդող երեք աշխատանքային օրերի ընթացքում, բացառությամբ սույն կարգի 18-րդ կետով նախատեսված դեպքերի: Նախորդ դասային աստիճանը կրելու ժամկետը հաշվարկվում է այդ դասային աստիճանը շնորհելու մասին իրավական ակտը ստորագրելու հաջորդ օրվանից, իսկ սույն կարգի 14-րդ կետով սահմանված դասային աստիճանի կամ հատուկ կոչման համապատասխանեցման արդյունքում՝ զինվորական կամ այլ հատուկ կոչման (դասային աստիճանի) շնորհման իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից:

18. Քննչական մարմնում ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց հերթական դասային աստիճան, կոչում կարող է շնորհվել՝

1) մինչև նախորդ դասային աստիճանը կրելու՝ սույն կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետի լրանալը, բայց զբաղեցրած պաշտոնին հասանելիքից ոչ բարձր, որպես խրախուսում, պաշտոնեական պարտականությունները գերազանց կատարելու համար.

2) զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն դասային աստիճանից մեկ աստիճան բարձր դասային աստիճան կարող է շնորհվել նախորդ դասային աստիճանի ժամկետի ավարտից հետո՝ աշխատանքում ցուցաբերած առանձնահատուկ ծառայությունների համար:

19. Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն դասային աստիճանից մեկ աստիճան բարձր կամ վաղաժամկետ դասային աստիճան ծառայության ողջ ընթացքում կարող է շնորհվել ոչ ավելի, քան մեկ անգամ:

20. Քննչական մարմնում հերթական դասային աստիճանի համար սահմանվում են հետևյալ ժամկետները.

1) Հարկային ծառայության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 2 տարի.

2) Հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդականի և առաջին դասի խորհրդականի դասային աստիճաններ ունեցողի համար՝ 3 տարի.

3) Հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդականի և երկրորդ դասի ավագ խորհրդականի դասային աստիճաններ ունեցողի համար՝ 4 տարի.

4) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդականի դասային աստիճանը կրելու ժամկետներ չեն սահմանվում.

5) Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ունեցած հատուկ կոչումները դասային աստիճաններին համապատասխանեցնելիս տվյալ դասային աստիճանը կրելու ժամկետը հաշվարկվում է նախկինում ստացած և համապատասխանեցված հատուկ կոչման շնորհման իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ